

ՀԻՊԵՐՏՈՆԻԱՅԻ ՊԱՐԱԴՈՔՍԸ ՀԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԵՐԱՅՍԿԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՉՆԱՅԱԾ ԶԵՌՔԲԵՐՎԱԾ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Չոբանյան Ա.Վ.

Բոստոնի համալսարանի բժշկական կենտրոն, Բոստոն, Մասսաչուսեթս, ԱՄՆ

Անցկացված է մեծ սպեկտորի հիպերտենզիվ միջոցների արդյունավետության կլինիկական անալիզ հիպերտոնիայի բուժման ժամանակ, հատկապես անվերահսկելի ճնշում ունեցող պացիենտների դեպքում: Չնայած հիպերտոնիայի պաթոգենետիկ և սիմպտոմատիկ բուժման ժամանակ լայն արսենալի դեղամիջոցների կիրառմանը, հիվանդացության հաճախականությունը աշխարհի շատ երկրներում կտրուկ աճել է: Այդ հանգամանքը մասնավորապես առավել ակնառու դիտվում է հիպերտոնիա հիվանդացության վիճակագրական հետազոտության ժամանակ ԱՄՆ-ում:

Վիճահարույց են այն հարցերը, որոնք կապված են հիվանդության առավել արդյունավետ բուժման և կանխատեսման նպատակով կիրառվող անտիհիպերտենզիվ միջոցների տարբեր կոմբինացիաների օգտագործման հետ: Դրանք առաջին հերթին β -բլոկատորներն են, կալցիումային ուղիների բլոկատորները, անգիոթենզին-կոնվերտացնող ֆերմենտի ինհիբիտորները, անգիոթենզինային ռեցեպտորների բլոկատորները և այլն:

Չնայած Համատեղ ազգային կոմիտեն իր մեթոդական հրահանգներում (2003 թ.) հանձնարարում է դիուրետիկները (թիազիդ) որպես հիպերտոնիայի բուժման գերադասելի միջոց, սակայն բազմաթիվ հետազոտությունների վերջին տվյալները ցույց են տալիս հիվանդության բուժման տակտիկայի ավելի ճկուն և ուղղված մոտեցման անհրաժեշտությունը: Այդ հետազոտություններն իրենց համակվածությամբ ցույց են տվել, որ նոր կոնկրետ պրեպարատների քրոնոլոգական ընդգրկումը հիպերտոնիայի բուժման ընդհանուր սխեմայի մեջ նշանակալի իջեցնում է սիրտ-անոթային հիվանդությունների հաճախականությունը, բարենպաստորեն արտացոլվելով դրանց կանխատեսման վրա:

Չեղինակի կողմից առաջարկվում է հիվանդության բուժման նոր ալգորիթմ, հիմնված նոր արդյունավետ դեղամիջոցների կլինիկորեն հիմնավորված փուլային ընդունման վրա, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դրանց բարենպաստությանը, կենսակենրայի փոփոխությանը և այլն:

Առաջարկվում է նաև հիպերտոնիայի ռիսկի գործոնների ինֆորմատիվ և ակներև սխեմա, որտեղ ընդգրկված են այնպիսի գործոններ, ինչպիսին են գենետիկ հակվածությունը, ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակը, տարիքային բնութագրերը, քնած ժամանակ ապնոտ, գիրությունը, ջրա-աղային փոխանակության խանգարումը (հիմնականում նատրիումի բարձր մակարդակ և կալցիումի՝ ցածր), ալկոհոլի չարաշահումը: